

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
Հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐԱՄ ՍԻՍԱԿԻ
Մ.Մանուշյանի անվան հ.48 հիմնական դպրոց

Հետազոտական աշխատանք
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ղեկավար, դոցենտ՝
Յու.Գրիգորյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....	3
Ֆիզիկական դաստիարակության նշանակությունը առողջական տարբեր խնդիրներ ունեցող երեխաների առողջության պահպանման համար.....	5
Հատուկ բժշկական խմբերի ֆիզիկական կուլտուրայի խնդիրներն ու կազմակերպման առանձնահատկությունները.....	6
Ուսուցման մեթոդների կիրառումը հատուկ բժշկական խմբերի ֆիզիկական կուլտուրայի դասերին.....	9
Բժշկամանկավարժական հսկողությունը.....	11
ԿԱՊԿ-ունեցող երեխաների դարոցական ուսուցման նախապատրաստման գործընթացի կարևորությունը.....	12
Եզրակացություն.....	16
Օգտագործված գրականության ցանկ.....	17

Ներածություն

Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է: Կրթության հիմնական նպատակն է դառնում սովորողների համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովումը: Այստեղ կարևորվում է սովորողի ոչ միայն գիտելիքների, այլև համակարգված հիմնական կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորումը: Ֆիզիկական դաստիարակությունը կարևոր նշանակություն ունի սովորողների անձի ձևավորման, նրա ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովման, մտավոր առաջընթացի, բարոյահոգեբանական որակների դաստիարակման և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Հանրակրթական դպրոցի ուսուցման բոլոր մակարդակներում ֆիզիկական դաստիարակությունը նպաստում է ոչ միայն առողջ, այլև տարբեր պատճառների հետևանքով թուլակազմ, առողջության մշտական և ժամանակավոր շեղումներ ուենցող դպրոցականների ֆունկցիոնալ և շարժողական զարգացմանը: Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի «Ֆիզիկական դաստիարակության համալիր» ծրագրի համաձայն՝ հանրակրթական հաստատությունների բոլոր աշակերտներին ուսումնական տարվա սկզբին բժշկական զննման ենթարկելու և արդյունքում հիմնական նախապատրաստական և հատուկ խմբերի բաժանման չափորոշիչը հաստատելու մասին» 2006թ. սեպտեմբերի 22-ի № 1075-Ն հրամանի համաձայն՝ բոլոր ուսումնառության անցնողները, անկախ հաստատության տիպի, մինչ ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներն սկսելը անցնում են բժշկական զննում և դրա արդյունքների հիման վրա բաժանվում են երեք խմբի՝ հիմնական, նախապատրաստական և հատուկ:

«Ֆիզկուլտուրա» առարկայի դասավանդման խնդիրները առողջության սահմանափակ կարողություններով (ԱՍԿ) սովորողների մոտ բավականին բարդ, ծավալուն և դեռևս իր ամբողջական յուժուժը չգտած հարց է: Սա հիմնականում պայմանավորված է նրանով, որ այն բավականին ծավալուն, բազմաշերտ, ժամանակատար, ծախսատար, մարդկային մեծ ռեսուրսներ, տարբեր քնազավառների մասնագետների համատեղ ջանքեր պահանջող գործընթաց է:

Աշխատանքի արդիականությունը թելադրվում է ոչ միայն նրանով, որ այս կարգի երեխաների թիվը ըստ մի շարք մասնագետների տվյալների ավելանում է, այլ նաև այն հանգամանքով, որ այդ կարգի սովորողների թվի ընդգրկվածությունը հանրակրթական դպրոցում ավելանում է կապված ներառական կրթական համակարգի սահմանների ընդլայնմամբ: Աշակերտների բժշկական մի խմբից մյուսը փոխադրամբ կատարվում է բժշկի հերթական կամ լրացուցիչ հետազոտության արդյունքից հետո: Ֆիզիկական կուլտուրայի դասերից ժամանակավոր ազատումը կատարվում է միայն բժշկի թույլտվությամբ:

Աշխատանքի նպատակն է բացահայտել և վեր հանել ֆիզիկական զարգացման ժամանակավոր կամ մնայուն շեղումներ ունեցող սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ հատուկ պայմանների ստեղծումը: Առողջության սահմանափակ կարողություններով սովորողների խումբը չափազանց տարատեսակ է, այդ իսկ պատճառով էլ դպրոցական կրթական մակարդակի և բովանդակության դիապազոնը պետք է լինի առավելագույն լայն տարբերակված համապատասխանեցված այս խմբի բոլոր դպրոցականների հնարավորություններին և պահանջներին:

**Ֆիզիկական դաստիարակության նշանակությունը առողջական տարբեր
խնդիրներ ունեցող երեխաների առողջության պահպանման համար**

Դպրոցում սովորողների ֆիզիկական դաստիարակությանն առաջադրված խնդիրների շարքում իր ուրույն տեղն ունի նաև ֆիզիկական կուլտուրայից գիտելիքների ձեռքբերումը:

Անհրաժեշտ է սովորողներին ծանոթացնել ֆիզիկական դաստիարակության առողջարարական նշանակությունը, որից հետո պատկերացում տալ առողջական տարբեր խնդիրներ ունեցողների համար դրա նշանակության վերաբերյալ՝ կապված առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման բարելավման և ֆունկցիոնալ շեղումների կամ թերությունների վերացմանը:

Հայտնի է, որ շարժումը և առանձնապես ֆիզիկական վարժությունների ինչքան են անհրաժեշտ մարդու օրգանիզմի բոլոր համակարգերի զարգացման և ամրապնդման համար: Ֆիզիկական վարժություններով կանոնավոր և սիստեմատիկաբար զբաղվող դպրոցականներն ունեն ֆիզիկական զարգացման ավելի լավ ցուցանիշներ, քան ֆիզիկական վարժություններով չզբաղվողները:

Ֆիզիկական վարժությունները բարելավում են օրգանիզմի բոլոր օրգան համակարգերի գործունեությունը, հատկապես սրտի աշխատանքը, օրգանիզմի նյութափոխանակությունը, բարելավում և բարձրացնում է թոքերի կենսական տարողությունը:

Սակայն պետք է հիշել, որ հատուկ բժշկական խմբում ընդգրկված աշակերտների համար սահմանափակված են որոշ վարժությունների կատարումը, որոնք ուղղված են արագաշարժության, ուժի, դիմացկունության զարգացմանը: Քայլքի և վազքի տեմպը և տարածությունը ցածրացված են: Հատուկ խմբի երեխաների պարապմունքներին չի կարելի կատարել այնպիսի վարժություններ, որոնք կապված են նրանց կողմից ուժերի գերլարման, ճիգեր գործադրելու, պկվելու, երկարատև ստատիկ լարումների, շնչառությունը երկարատև պահելու հետ:

Աշակերտներին անհրաժեշտ է միշտ հիշեցնել, որ ֆիզիկական վարժություններն օրգանիզմի վրա ունենում են զարգացնող, կատարելագործող, վերափոխող ազդեցություն:

Հատուկ բժշկական խմբերի ֆիզիկական կուլտուրայի խնդիրներն ու կազմակերպման առանձնահատկությունները

Առողջության մշտական կամ ժամանակավոր զգալի շեղումներ ունեցող անձինք, որոնց ուսուցումը պետք է իրականացվի սովորական ուսումնական ծրագրով, սակայն նրանք ունեն «ֆիզիկական կուլտուրա» առարկան ընդհանուր խմբերում պետական ծրագրով պարապելու հակացուցումներ, ընդգրկված են հատուկ խմբում:

Հանրակրթական դպրոցում հատուկ բժշկական խմբերի կոմպլեկտավորումն իրականացվում է հաշվի առնելով դպրոցականների հիվանդության բնույթը, ֆիզիկական զարգացումը և ֆունկցիոնալ վիճակը: Մեկ խմբում կարող են ընդգրկվել երկուսից-չորս դասարանների դպրոցականները՝ 1-4-րդ դասարաններ, 5-7-րդ, 8-9-րդ, 10-12-րդ դասարանները: Հաշվի առնելով բժշկական ցուցումները, ֆիզիկական զարգացման տվյալները և ֆիզիկական պատրաստությունը՝ հատուկ խմբերը պետք է բաղկացած լինեն մեկ ուսուցիչ՝ 7-10 աշակերտ հարաբերությամբ: Հատուկ խմբերի պարապմունքները անցկացվում են արտադասարանական ժամերին, շաբաթական 2 անգամ՝ 45 րոպե տևողությամբ: Հատուկ խմբի պարապմունքներն անցկացնում են հատուկ պատրաստություն ունեցող ֆիզկուլտուրայի ուսուցիչները, կինեզիոլոգները, ադապտիվ ֆիզկուլտուրայի մասնագետները:

Հատուկ խմբում ընդգրկված աշակերտներն ազատվում են ուսումնական նորմատիվների հանձնումից և մրցումների մասնակցումից: Հատուկ խմբի թույլատրելի ֆիզիկական ծանրաբեռնվածության ծավալներն են.

- ա- Պարապմունքները հատուկ ուսումնական ծրագրով՝ հաշվի առնելով հիվանդության բնույթը և ծանրության աստիճանը:
- բ- Անհրաժեշտության դեպքում պարապմունքներ՝ բուժական ֆիզկուլտուրայով, համապատասխան կազմակերպություններում:

Հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների ֆիզիկական կուլտուրայի խնդիրներն են.

- ա- սովորողների առողջության ամրապնդում,
- բ- հիվանդությունների հետևանքով թուլացած օրգանների և համակարգերի ֆիզիոլոգիական ակտիվության բարձրացում,
- գ – մտավոր և ֆիզիկական աշխատունակության բարձրացում,

դ- ֆիզիկական զարգացման բարելավում, ֆունկցիոնալ շեղումների կամ թերությունների շտկում, օրգանիզմի կոփում,

ե – հիմնական շարժողական ունակությունների և հմտությունների զարգացում,

զ – ճիշտ կեցվածքի ձևավորում, հարթաթաթության կանխում,

է – ճիշտ շնչառության ուսուցանում, օրգանիզմի պաշտպանական ֆունկցիաների և դիմադրողականության բարձրացում,

ը – ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, անձնական հիգիենայի, կոփման կանոնների, օլիմպիական խաղերի, հաշմանդամների սպորտի, ինքնավերահսկողության, ինքնուրույն հիգիենիկ մարմնամարզությամբ զբաղվելու գիտելիքների ձեռքբերում,

թ – բարոյականային որակների դաստիարակում, պարբերաբար ֆիզիկական կուլտուրայով ինքնուրույն զբաղվելու ցանկության ձևավորում,

ժ – հոգեբանական բարդույթներից ձեռքազատում:

Հատուկ բժշկական խմբերում ընդգրկված աշակերտների շարժողական ռեժիմները տարբերակելու նպատակով, համաձայն հիվանդության բնույթի և ծանրության աստիճանի, ցանկալի է նրանց բաժանել «A» և «B» ենթախմբերի:

«A» ենթախմբում ընդգրկվում են այն սովորողները, որոնց առողջական շեղումները հետադարձելի բնույթ ունեն, թուլացած են տարբեր հիվանդությունների հետևանքով: Ֆիզկուլտուրայի պարամունքները պետք է կառուցվեն հատուկ ծրագրերով՝ հաշվի առնելով առողջության շեղման և ֆիզիկական զարգացման աստիճանը և բնույթը:

«A» ենթախմբի համար ֆիզիկական բեռնվածությունները՝ ծավալը և լարվածությունն աստիճանաբար բարձրանում են՝ համաձայն օրգանիզմի հարմարվողական հնարավորությունների:

«B» ենթախմբում ընդգրկվում են այն դպրոցականները, որոնց մոտ առկա են օրգանների և համակարգերի անդառնալի փոփոխություններ:

Հատուկ բժշկական խմբերի հետ պարապմունքներ անցկացնող ուսուցիչների պարտականություններն են.

1. Տեղյակ լինել մանկական օրգանիզմի վրա ֆիզիկական վարժությունների և կոփման ֆիզիոլոգիական ազդեցության մասին:

2. Պարբերաբար հետևել պարապմունքների ժամանակ առաջարկվող ծանրաբեռնվածությանը սովորողների հակազդմանը՝ նրանց հոգնածության արտաքին նշաններով:

3. Կարողանալ որոշել դասի ֆիզիոլոգիական կորը՝ հաշվի առնելով սովորողների ինքնազգացողությունը պարապմունքի ընթացքում:

4. Պլանային ձևով անցկացնել ստուգիչ փորձեր՝ պարապմունքների արդյունավետությունը գնահատելու համար:

5. Պարապմունքների ժամանակ ապահովել սանիտարահիգիենիկ կանոնների պահպանումը:

Ուսուցման մեթոդների կիրառումը հատուկ բժշկական խմբերի ֆիզիկական կուլտուրայի դասերին

Ֆիզիկական կուլտուրայի դասերին՝ և հիմնական, և հատուկ խմբերում պարապմունքներն անցկացնելու համար օգտվում են՝

ա – ավանդական մեթոդից

բ- ժամանակակից մեթոդներ (փոխներգործուն)

Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի տեղեկատվության պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը (խոսքը վերաբերում է գիտելիքին)՝ ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ տեսական գիտելիքների հաղորդում՝ զրույցի և պատմելու միջոցով, ուսումնական նյութի բացատրում, ցուցումներ, հրահանգներ, վարժությունների ցուցադրում, պաստառների ցուցադրում:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:

Հատուկ բժշկական խմբերի «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերը հիմնականում անցկացվում են գործնական մեթոդով՝ խոսքային և զննական մեթոդներով համակցված:

Խոսքային մեթոդ – իր մեջ ներառում է բացատրում, զրույց, պատմում, հրահանգներ, ցուցումներ:

Զրույց – կիրառվում է դասի ցանկացած մասում:

Պատմում - կիրառվում է նոր վարժությունների , խաղերի, ուսուցման ժամանակ:

Հրաման, հրահանգ - օգտագործվում են ֆիզիկական կուլտուրայի բոլոր դասաժամերին:

Ցուցումներ – օգտագործվում են աշակերտների կողմից կատարվող վարժությունների և խաղերի ժամանակ, դրանք ճիշտ կատարելու նպատակով:

Զննական – կիրառվում է՝ ֆիզիկական վարժությունների, մարզախաղերի տարբեր ցուցադրում, դիաֆիլմերի, պաստառների և դիտողական պարագաների օգտագործումը:

Ֆիզիկական կուլտուրայի դասերի, ինչպես նաև հատուկ խմբի պարապմունքների ժամանակ ուսուցիչը կիրառում է գործնական հետևյալ մեթոդները.

ճակատային կամ ֆրոնտալ - բոլորին տրվում է մեկ առաջադրանք՝ միաժամանակ կատարելու համար (հիմնականում կիրառվում է մ/մ վարժությունների, շարային պատրաստություն, ընդհանուր զարգացնող վարժությունների կատարման ժամանակ):

Հոսքային կամ հարահոս - վարժությունը կատարվում է հերթականությամբ՝ միմյանց հետևից, անընդմեջ հոսքով:

Խմբային մեթոդ - դասարանը բաժանվում է խմբերի, իսկ խմբերը վարժությունները կատարում են տարբեր գործիքների վրա: Օգտագործվում է հատկապես մարզախաղերի տարբեր ուսուցման ժամանակ:

Հերթափոխային մեթոդ - աշակերտները բաժանվում են ենթախմբերի և վարժությունները կատարում են հերթականությամբ:

Անհատական մեթոդ - պարապողին տրվում է անհատական առաջադրանք: Այս մեթոդը օգտագործվում է հատուկ բժշկական խմբերում:

Շրջանաձև մեթոդ - օգտագործվում է այն ժամանակ, երբ սովորողները յուրացրել են վարժությունները:

Հատուկ բժշկական խմբերի երեխաների համար պարապմունքները կազմակերպվում են խառը տիպի, քանի որ կիրառվող ուսուցման մեթոդների բազմազանությունը մեծացնում է աշակերտների հետաքրքրությունը դասերի հանդեպ:

Հատուկ բժշկական խմբի աշակերտների ֆիզիկական կուլտուրայի ծրագրի հիմքում դրված է հանրակրթական դպրոցի ֆիզիկական կուլտուրայի ծրագիրը որոշակի լրացումներով և անհրաժեշտ փոփոխություններով: Ծրագրում հիմնականում ընդգրկված են մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, շարժախաղեր, մարզախաղերի տարրեր:

Հատուկ բժշկական խմբերի պարապմունքներն ավելի արդյունավետ կլինեն, եթե անցկացվեն բացօթյա- նպաստում է աշակերտների կոփմանը և առողջության ամրապնդմանը:

Բժշկամանկավարժական հսկողությունը

Հանրակրթական ուսումնական հաստատություններում բոլոր սովորողները ուսումնական տարվա սկզբում ենթարկվում են բժշկական ստուգումների և դրա արդյունքներից ելնելով սովորողների բաժանում են երեք խմբերի՝ հիմնական, նախապատրաստական և հատուկ: Հատուկ բժշկական խմբերում ընդգրկվում են այն աշակերտները, որոնց առողջական վիճակում կան ժամանակավոր կամ մշտական բնույթի նշանակալի շեղումներ և որոնց համար հակացուցված է ֆիզիկական կուլտուրայի պետական ծրագրով նախատեսված վարժությունները: Հիմնական և նախապատրաստական խմբերում ընդգրկված դպրոցականների համար պարտադիր է մասնակցությունը ֆիզիկական կուլտուրայի դասերին:

Հատուկ բժշկական խմբերի հետ պարապմունքներն անցկացնում են վերապատրաստում անցած ուսուցիչները, ինչպես նաև հատուկ պատրաստություն ունեցող բուժաշխատողները:

Հատուկ խմբի ֆիզկուլտուրայի պարապմունքների անցկացման կարևոր պայմանն է պարտադիր բժշկամանկավարժական հսկողությունը:

Ֆիզիկական կուլտուրայով զբաղվողների բժշկական հսկողությունն իր մեջ ներառում է՝

- սովորողների առողջության և ֆիզիկական զարգացման պարտադիր և պարբերական ստուգում,
- բժշկամանկավարժական դիտարկումները,
- մարզական և սպորտային կառույցների սանիտարահիգիենիկ հսկողությունը,
- վնասվածքների կանխարգելումը:

Մանկավարժական հսկողություն իրականացվում է մանկավարժական դիտարկումների միջոցով:

Դիտումները կարող են լինել ընդհանուր բնույթի կամ որևէ հարցի վերաբերյալ:

Դիտարկումներն ուղղված են դասերի և պարապմունքների կառուցվածքի, սովորողի առողջական վիճակի հետ կապված բեռնվածության ծավալի ընտրության ճշտությունը:

Դիտումների ժամանակ հաշվի են առնվում նաև սովորողների ինքնազգացողությունն ու հոգնածությունը:

**Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների
դպրոցական ուսուցման նախապատրաստման գործընթացի կարևորությունը**

Դպրոցական ուսուցման նախասկզբը երեխայի կյանքի օրինաչափ փուլ է՝ յուրաքանչյուր նախադպրոցական հասնելով որոշակի տարիքի գնում է դպրոց: Սակայն թե, ո՞ր տարիքից է նպատակահարմար սկսել դպրոցական ուսուցումը, կարո՞ղ է արդյոք հաղթահարել երեխան դպրոցական ծրագրերը: Ինչպես նախապատրաստել երեխային դպրոցական ուսուցմանը, ինչպես օգնել երեխայի հաղթահարել դպրոցական դժվարությունները: Այս հարցերը անհանգստացնում են թե ծնողներին, թե մանկավարժներին և թե հոգեբաններին:

Խնդիրը շատ ավելի բարդ է, երբ հարցը վերաբերվում է զարգացման այս կամ այն տիպի խանգարումներ ունեցող երեխաներին, քանի որ այս դեպքում վերոնշյալ հարցերի հետ մեկտեղ անհրաժեշտ է լուծել նաև երեխայի կարիքներին համապատասխան դպրոցի տիպի ընտրության հարցը: Ներկայումս ՀՀ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար գործում են հատուկ, ներառական և սովորական հանրակրթական դպրոցներ, իսկ թե տվյալ երեխայի համար դպրոցի որ տիպը կարող է առավել բարենպաստ պայմաններ ապահովել կրթության և զարգացման համար, բավականին բարդ հարց է, որում ծնողը շատ հաճախ դժվարանում է, չի կարողանում ինքնուրույն կողմնորոշվել:

Ներառական կրթությունը դիտարկվում է որպես ուղի և հնարավոր միջոց՝ սահմանափակ հնարավորություններով անձանց հասարակության մեջ ներառելու և նրանց հարմարումը ապահովելու համար: Համատեղ ուսուցման իրականացման փորձը վկայում է, որ այս բարդ գործընթացը պահանջում է դպրոցի սովորական կենսաձևի վերակառուցում: Ներառական կրթությունը դիտարկվում է որպես երկկողմանի գործընթաց, որի մեջ ընդգրկվում է՝ մի կողմից սովորողի հարմարեցումը նրա համար նոր կրթական միջավայրում, մյուս կողմից՝ դպրոցն իր բազմագործառույթային կառուցվածքով հարմարվում է «առանձնահատուկ կարիք ունեցող սովորողին»: Դրա համար անհրաժեշտ է նախատեսել բազմակողմանի օգնություն և աջակցում (հոգեբանական, մանկավարժական, շտկող զարգացնող, նյութական և այլն): Այստեղ առաջանում է նոր սոցիալական իրավիճակ, որտեղ ստեղծվում են փոխգործունեության, փոխհարաբերությունների և սոցիալական նոր

կապերի մեխանիզմներ՝ հարմարման մեխանիզմների ձևավորումը դառնում է դպրոցի համար նոր խնդիր: Անհրաժեշտ է կազմակերպել համապատասխան աշխատանքներ՝ ուղղված նվաճ սովորողների աշակերտների, մանկավարժների, ինչպես նաև ծնողների կողմից ընդունմանը: Անհրաժեշտ է սահմանափակ հնարավորություններով սովորողի համար պայմաններ ստեղծել՝ ընդգրկվելու նոր միջավայր և ընդունելու տվյալ կրթական հաստատության գործող նորմերն ու կանոնները: Մանկավարժական տեսանկյունից պետք է այնպես կազմակերպել ուսուցումը, կառուցել դասը, որ սովորողը կարողանա ընդգրկվել այդ գործընթացի մեջ որպես սեփական գործունեության սուբյեկտ: Համատեղ ուսուցման բարդ գործընթացում շատ կարևոր է հաշվի առնել հարմարման ժամանակահատվածը, այլապես՝ ներառված սովորողի հետագա գործունեությունը կարող է ունենալ բացասական միտումներ: Հարմարման գործընթացն ունի բարդ կառուցվածք: Սովորողի հաջողությունը պայմանավորված է նաև անձի ակտիվությամբ: Սահմանափակ կարողություններով սովորողների ակտիվությունը տարբեր իրավիճակներում տարբեր մակարդակներով է արտահայտվում: Անձանոթ միջավայրում նրանց ակտիվությունը շատ ցածր է:

Սահմանափակ կարողություններով սովորողների ակտիվությունը տարբեր կորեպ է դրսևորվում նաև տարբեր առարկաների դասերի ժամանակ:

Հատուկ կարիքով երեխայի զարգացումը և կայացումը իրականանում են սոցիալական փորձի սահմանափակ (սոցիալական դեպրիվացիա) պայմաններում: Հատուկ կարիքով երեխան առավել օգնության կարիք է զգում սոցիալական ոլորտում, և այնտեղ պոտենցիալ հնարավորությունները կան շտկողական ներազդեցության համար: Դպրոցում հարմարման խնդիրներին առանձնահատուկ ուշադրության հատկացումը հիմնավորված և պարտադիր պահանջ է, քանի որ դրա արդյունավետությամբ են պայմանավորված անձի հարմարման մեխանիզմների, ինչպես նաև այնպիսի անձնային նորագոյացությունների ձևավորումը, ինչպիսիք են՝ վստահությունը, ինքնուրույնությունը և ակտիվությունը: Սահմանափակ հնարավորություններով երեխաները նոր դասարանում գտնվելու սկզբնական ժամանակահատվածում ներքուստ լարված են: Այդ լարվածությունն աստիճանաբար թուլանում է կամ հակառակը՝ բարձրանում:

Ներառում է հնարավոր է իրականացնել մի քանի փուլով: Ներառական կրթության ուսումնասիրությունները հիմք են տալիս ենթարկելու, որ համատեղ ուսուցումը դրականորեն է ազդում սովորողների փոխհարաբերությունների վրա:

Դպրոցի՝ որպես ուսումնական հաստատության հիմնական գործունեությունը ուսուցման իրականացումն է: Դպրոցում ներառման գործընթացի խնդիրն է՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներգրավումը ուսումնական գործունեության մեջ: Յուրացնելով ուսումնական գործընթացը՝ երեխան դառնում է ավելի վստահ, նվազում է նրա տագնապի մակարդակը, հաղթահարում է վախը դպրոցի նկատմամբ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող՝ հատկապես մտավոր հետամնացություն ունեցող երեխաների, ուսումնական գործունեության մեջ գերակայում է սոցիալական մոտիվացիան: Այն պահպանվում է ոչ միայն տարրական, այլև հիմնական դպրոցում:

Դպրոցի խնդիրն է՝ կրթության առանձնահատուկ կարիքներով սովորողի համար ստեղծել հարմարման պայմաններ, իսկ ուսուցիչն էլ դասի ընթացքում իրականացնելու այդ պայմանները: Դպրոցում կրթական հարմար միջավայրի ստեղծումը ճիշտ կազմակերպչական աշխատանքների դեպքում կրճատում է սոցիալական հարմարման ժամանակահատվածը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ ներառման պայմաններում կրթական հարմարման մեխանիզմների ձևավորման հարցում մեծ դեր ունեն նման երեխաների ծնողները: Ուսումնական հաստատությունը միջոցներ է ձեռնարկում ծնողներին ընգրկելու սոցիալական առավել լայն կապերի մեջ: Դպրոցը դառնում է ծնողներին միավորող, նրանց աջակցող օղակ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, մտավոր հետամնաց, երեխաներին ինքնուրույն կյանքին, աշխատանքային գործունեությանը և հասարակության մեջ ներառելու նախապատրաստման խնդիրը այսօր արդական է: ԿԱՊԿ ունեցող երեխաների դաստիարակչական գործընթացը պետք է նպաստի երեխաներին ինքնուրույն կյանքի պատրաստելուն՝ նրանց կողմից տարեկան կենցաղային առաջադրանքների կատարելուն, ինքնասպասարկման էլեմենտների հարստացմանը, սոցիալական ադապտացիային:

ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ աշխատում են հատուկ մանկավարժական լրացուցիչ կրթությամբ ուսուցիչները, որոնք դասավանդում են հանրակրթական առարկաների տարրեր, երաժշտություն, արվեստ, տեխնոլոգիա և ֆիզկուլտուրա: Հատուկ ուսուցիչները կազմում են ընդհանուր ուսումնական պլանը և դրանով պատասխանատու են դառնում մտավոր հետամնացություն ունեցող սովորողների կրթության իրականացման համար:

Եզրակացություն

Այսպիսով, ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ դարոցականներին համապատասխան բժշկական խմբերում տեղաբաշխումը պետք է իրականացվի տարբերակված մոտեցումով, հաշվի առնելով նաև սովորողի անհատական առանձնահատկությունները: Ուսումնական պարապմունքները իրականացվում են բուժաշխատողի և հատուկ պատրաստված մանկավարժի անմիջական վերահսկողության ներքո, ովքեր սովորողներին զինում են առողջության ամրապնդման և պահպանման հմտություններով: Գլխավորը այստեղ սովորողի գիտակցված վերաբերմունքն է ուսումնական գործընթացին:

Ֆիզկուլտուրայով զբաղվողների բժշկական վերահսկողությունն իր մեջ ընդգրկում է.

- սովորողների առողջության և ֆիզիկական զարգացման վիճակի պարբերաբար ստուգումը,
- բժշկամանկավարժական դիտումները,
- մարզական կառույցների սանիտարահիգիենիկ հսկողությունը, :
- վնասվածքների կանխարգելումը:

Հարկ է նշել, որ ինչպես ֆիզկուլտուրայի ուսուցիչը ոչ մի այլ ուսումնական գործունեության ընթացքում ուսուցիչը չի կարող արդյունավետ օգնել առողջության սահմանափակ կարողություններով երեխային: Ֆիզկուլտուրայի ուսուցչին անհրաժեշտ է իմանալ սովորողների անցկացրած հիվանդություններից հետո դասերի և պարապմունքների վերսկսման ժամկետները, որոնք սահմանում է բժիշկը: Ուսումնական գործունեության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով առաջարկում ենք ուսումնական տարվա սկզբին անցկացվող բժշկական զննման ժամանակ սովորողների հասակը և քաշը չափելուց զատ ուսումնասիրել հենաշարժական համակարգը, տեսողության վիճակը, զարկերակային ճնշումը:

Եվ ինչպես հիմնական ու նախապատրաստական խմբերի համար գոյություն ունեցող ծրագրերն են պարբերաբար կատարելագործվում, այնպես էլ մշակել ծրագրեր հատուկ խմբի սովորողների համար, որոնք կենթարկվեն մշտական ուսումնասիրությունների և կատարելագործման:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ֆիզիկական կուլտուրա- ծրագիր հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբեր: Երևան 2011թ.
2. Ֆիզիկական կուլտուրա: Հատուկ բժշկական խմբերը 1-12-րդ ֆասարաններ: Ուսուցչի ձեռնարկ: Երևան ՀՀ ԿԳՆ- Կրթության ազգային ինստիտուտ, 213թ.:
3. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը. նախագիծ, Երևան, 2006 թ.
4. Հանրակրթության պետական կրթակարգ, Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ: Երևան, «Աևտարես», 2004 թ. ’
5. Программы восьмилетней и средней школы, Физическая культура для учащихся 4-10 классов и школьников, отнесенных по состоянию здоровья к специальной медицинской группе, Москва, 1981 г.
6. Булич Э. Г. Физическое воспитание в специальных медицинских группах М., 1986
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=29261>